## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք,
ՀՀ, Արարատի մարզ, գ. Աբովյան, Հեռ. (098)550001 ,
abovyan.ararat@mta.gov.am

N 183
*29 դեկտեմբեր 2015թ.*

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ Ռ. Աբրահամյան

Կից ներկայացնում ենք թիվ 50, թիվ 51, թիվ 52, թիվ 53, թիվ 54, թիվ 55 ավագանու որոշումները:

Առդիր 14 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ 04201558 ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մուրադյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 50

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 13-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու արտահերթ թիվ 13-րդ նիստի օրակարգը՝

1. 2016 թվականի ,, Տեղական տուրքերի և վճարների,, մասին համայնքի ղեկավարի կողմից ավագանու նիստի հաստատմանը ներկայացվող դրույքաչափերի հաստատման մասին:

2. Աբովյան համայնքի 2016թ-ի բյուջեի եկամտային մասում գույքահարկի գումարները պակասեցնելու մասին:

3. Աբովյան համայնքի 2016 թ-ի բյուջեի եկամտային մասում հողի հարկի գումարը պակասեցնելու մասին:

4. Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2016 թվականի Աբովյան համայնքի բյուջեի հաստատման մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԱՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 51

### 2016 ԹՎԱԿԱՆԻ,, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ,, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով և << Տեղական Տուրքերի և Վճարների Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 13000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 հազար

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ

2) ծխախոտի  արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար

տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար - 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 150000 դրամ

գ) խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 30000 դրամ

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման  թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝  հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

5[1]. Սույն օրենքի 7-րդ հոդվածի << ժ>> ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ .

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դր.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

Հայաստանի Հանրապետության Աբովյան համայնքի անվանումը ֆիրմային անվանում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ.

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

9.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ.

10. 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառվել է 0,5 գործակիցը:

11. Սույն օրենքի 7-րդ հոդվածի <<ժզ>> կետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000

Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար` 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՈՒՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 04201558 * ՏԵՂԱԿԱՆ ՀՀ ՍԻԳՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 52

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Գույքահարկի Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և << Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

համայնքի ավագանին որոշում է`

Կան ավտոմեքենաները որոնք հաշվառված են Աբովյան համայնքի վարչական տարածքում, ինչպես նաև „Մխչյան „ համայնքների միության գույքահարկի շտեմարանում, սակայն նրանց ճակատագիրը անհայտ է: Քաղաքացիները հրաժարվում են վճարել գույքահարկ, քանի որ այդ ավտոմեքենաները առք ու վաճառքի պայմանագրերով վաճառվել են այլ քաղաքացիների: 95.8 հազար դրամը` որպես չհավաքագրվող գումար , խանգարում է բյուջեյի ճիշտ պլանավորմանը և անհնարին է դարձնում հաշվարկային թվին: Հետևաբար ավագանին որոշեց, որպես չհավաքագրվող գումար 2016թվականի բյուջեյի եկամտային մասում ավտոհարկի գումարը պակասեցնել 95.8 հազ.դրամով և հաստատել ավտոմեքենաների սեփականատերերի ցուցակը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼևՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«23»ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 53

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարավելավ << Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայյտանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և << Հողի Հարկի Մասին>> օրենքի 10-րդ հոդվածով.

համայնքի ավագանին որոշում է՝

Աբովյան համայնքի 2016թվականի բյուջեի եկամտային մասում հողի հարկի գումարը պակասեցնել 286.501 հազար դրամով և հաստատել 2011-2015թթ-ին Աբովյան համայնքում նորատունկ այգիներ հիմնած և հողի հարկից ազատված սեփականատերերի ցուցակը՝ համաձայն հավելվածի :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 54

## . ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տարածքային Կառավարման և Արտակարգ Իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N276- Ա հրամանով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2016թ-ի Աբովյան համայնքի ղեկավարիաշխատավարձը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | | 270000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 170000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 2.3-1 | 1 | 169000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 117000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 98000 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | | |

| | | |
|---|---|---|
| | | |
| Մշակույթի տան տնօրեն և գրադարանավար | 1 | 72800 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Համակարգչային օպերատոր<br>Հավաքարար | 1<br>1 | 78000<br>72800 |
| Պահակ | 1 | 72800 |
| | | |

Ընդամենը՝1120.400 (մեկ միլիոն հարյուր քսան հազար չորս հարյուր) հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՅՈՑ ՁՈՐ ... 04201558

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«23»ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 55

## . 2016Թ-Ի ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Աբովյան համայնքի 2016թ-ի բյուջեն.

Վարչական բյուջեի եկամտային մաս- 30156.300 հազ. դրամ

1. Հարկեր և տուրքեր --- 5716.9 հազ. դրամ

1.1 հողի հարկ --- 2228.5հազ. դրամ
1.2 Գույքահարկ շենքի և շինությունների ---118.4հազ. դրամ ,
այդ թվում՝ ֆիզ. անձանցից --- 118.4հազ. դրամ
1.3 Գույքահարկ փոխադրամիջոցներից --- 2808.0հազ. դրամ
1.4 Տեղական տուրք --- 162.0հազ. դրամ ,
այդ թվում՝ծխախոտի վաճ. թույլտվություն --- 72.0 հազ. դրամ
խմիչքների իրացման համար --- 90.0հազ. դրամ
2.Հողերի վարձակալությունից մուտքեր --- 400.0 հաղ, դրամ
3. Ընթացիկ ներքին դրամաշնորներ ---24439.4 հազ.դրամ,
այդ թվում՝դոտացիա՝ --- 24439.4 հազ. դրամ

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻ ՄԱՍ ------- 30156.300 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

1.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 17930.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4111--- 13700.0 հազ. դրամ --- աշխատավարձ
4212 --- 1100.0 հազ. դրամ --- Գյուղապետարանի ջեռուցման, էլեկտրոէներգիային համայնքի կենտրոնական ճանապարհի լուսավորության, գազի ծախսեր
4213--- 180.0 հազ. դրամ --- կոմունալ ծառայությունների ծախսեր այդ թվում՝
այդ թվում՝ ա/ 144.0 հազ. դրամ խմելու ջրի ծախսեր
բ/ 36.0 հազ. դրամ դեռատիզացիայի ծախսեր
4214 ---330.0 հազ.դրամ --- հեռախոսակապի, ինտեռնետ և դոմենի ծառայությունների ծախսեր
4215 --- 40.0 հազ դրամ ---ավտոմեքենայի ապահովագրական ծախսեր

4231--- 215.0 հազ.դրամ ---վարչական ծառայությունների ծախսեր՝ գույքահարկի և հողի հարկի

հաշվառման ծառայությունների գումար

4232--- 150.0 հազ.դրամ --- համակարգչային ծառայություն

4234 --- 110.0 հազ. դրամ ---տեղեկատվական ծառայությունների ծախսեր ( թերթերի գումար ) ,

թերթում հայտարարության տպագրման գումար

4235--- 200.0 հազ. դրամ --- Աուդիտորական ծառայություն

4241---145.0 հազ. դրամ--- Մասնագիտական ծառայություն

4252 --- 150.0 հազ. դրամ ---մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում

4261 --- 250.0 հազ. դրամ --- գրասենյակային նյութեր

Այդ թվում՝ ( թուղթ, մատիտ, գրիչ, հաշվիչ, ձևաթուղթ, կարիչ, դակիչ, կնոպկա, գրչաման, սեղանի և պատի օրացույցներ, ռեգիստր, գրասենյակային գրքեր, քաթրիչ ֆլեշկա և այլն )

4264 --- 950.0 հազ. դրամ --- տրանսպորտային նյութեր

այդ թվում՝ ա/ 700.0 հազ. դրամ բենզին

բ/ 250.0 հազ. դրամ ավտոպահեստամասեր

4267--- 100.0հազ. դրամ --- մաքրիչ նյութերի ծախսեր

( ավել, օճառ, պատուհան լվանալու հեղուկ, մաստիկա և այլն )

4269 --- 130.0հազ. դրամ --- հատուկ նպատակային նյութեր, այդ թվում՝

( դռան փական, էլ. հաղորդալար ,,խաչուկ,, ժամ, լույսեր, աթոռներ, պահարաններ, շերտավարագույրներ, և կառնիզներ)

4823---10.0 հազ. դրամ---զեխ. Ջննում

2. ՎԱՐՉԱԿԱՆ ՕԲԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ 200.0 հազ. դրամ

4251--- 200.0 հազ. դրամ (վարչական շենքի նորոգում)

3.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 3650.0 հազ. դրամ

4729 --- 3000.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, նորածին երեխաների ընտանիքներին

4726--- 500.0 հազ. դրամ --- թաղման գումար մահացած անձանց ընտանիքներին

4239--- 150.0 հազ.դրամ ---հուղարկավորության համար ծաղկեպսակի տրամադրման ծառայությունների գումար

4.ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 100.0 հազ. դրամ

4269 --- 100.0 հազ. դրամ --- վերջին զանգի կապակցությամբ աշակերտների նվերների գումար

4.ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 300.0 հազ. դրամ

4261 --- 300.0 հազ. դրամ --- սեպտեմբերի 1-ի կապակցությամբ աշակերտների նվերների գումար

5.ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐ. ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 200.0 հազ. դրամ

4269 --- 200.0 հազ. դրամ --- հատուկ նպատակային նյութեր՝ կենտրոնական փողոցի լուսավորության վերանորոգման համար ,այդ թվում՝ մալուխ /հաղորդալար/ լամպ և այլն

6. ԱՂԲԱՀԱՆՈՒՄ --- 996.0 հազ. դրամ

4213 --- 996.0 հազ. դրամ ---աղբահանման ծառայության գումար

7.ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ --- 1200.0 հազ. դրամ

4239 --- 750.0 հազ. դրամ --- մշակույթային միջոցառումների հետ կապված ծառայության մատուցման գումար

4269 --- 450.0 հազ. դրամ --- Մարտի 8-ի, հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության օրվա և ամանորյա նվերների գումար

8.ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅ.-ԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ --- 250.0 հազ. դրամ

4819 --- 250.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն ,,Արարատ-2001" հիմնադրանին, ,,Սևան,, մարզ. խորհուրդ, ,,ՀՀ ազատամ. Վետերան. Միություն,, , ,,Անմահ պուրակներ,, հուշահ. և այլն

9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ --- 100.0 հազ. դրամ

4241--- 100.0 հազ. դրամ--- հողերի չափագրում

10. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ --- 100.0 հազ. դրամ

4239 --- 100.0 հազ. դրամ --- թատերական ներկայացումների ծառայությունների գումար

11. ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՊՈԱԿԻՆ --- 893.0 հազ. դրամ

4637 --- 893.0 հազ. դրամ --- նախակրթարանի մեկ խմբի դաստիարակին աշխատավարձի վարձատրության գումար

12.ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ՝ 2000.0 հազ դրամ

4241--- հողերի չափագրման գումար--- 1000.0 հազ. դրամ

4823--- վկայականների ծառայության և պետական տուրքի գումար--- 1000.0 հազ. դրամ

13. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ --- 2307.3 հազ. դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԱՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ